Գրաքննության ժամանակ գրքերը

ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՑԵԱՆՑ

4/IX 1914
Վերջին
911(47.925)
Գ-20
910
383
Հանրագիտարան:

ԱՆՅԱՅՏ ԳԱՒԱՌՆԵՐ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ազգ. գրադարան
Ա. Մ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ
7/XI-1922

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Էլեկտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի
1914

Արշակի ժամանակ «Աղուանքն իբրև Շապուհ Բ-ի դաշնակից նուաճեցին Հայոց զանազան՝ ինչպէս Ուտի, Շակաշէն, Գարդմանաձոր, Կողթ և ուրիշ գաւառներ, որոնցից սակայն Մուշեղը եւ առաւ», այլև յետոյ 384—387 թուականներին «Հայոց պետութեան բաժանումից յետոյ Աղուանից թագաւորները տիրեցին Արցախի (այժմեան Ղարաբաղի) 12 և Ուտիքի (Գուգարքից արևելք և Արցախից հիւսիս) 8 գաւառներին»[2]. ուստի և Հայոց Ուտիքի և Արցախի շատ վայրեր յիշւում են իբրև Աղուանքին պատկանող ոչ միայն յետագայ՝ այլև դասական հեղինակներից։ Այսպէս մինչ Խորով Մեծի ժամանակ «Ուտի գաւառի, Խաղխաղ քաղաքն» էր «ձմերոց արքայութեան Հայոց»[3], արդէն Ե. դարում նոյն «Խաղխաղ քաղաքը ... ձմերոց էր թագաւորացն Աղուանից»[4]։ Ապա այն ժամանակից երբ Պարսաւը կաւառ Ա-ի ձեռքով շինուեց մի սահմանապահ ամուր ամրոց Հոների ասպատակութեան դէմ Պերոզ—կաւառ անուանով, անշքացաւ շուտով հին մայրաքաղաք Կապաղակը, և Գարտաւը դարձաւ իսկական կենտրոնատեղի [Աղուանից] երկրի»[5]։ Այսպիսով ուրեմն կայ

ճիճեանը՝ յիշելով այս վկայութիւնները յարում է. «Բայց է թէ Գանձակ էր մերձ յամրոցն Խաչէն, ուստի և ի գաւառի նորա. իսկ Խաչենք էր նոյն իսկ Արցախ, որպէս նաև դիրք այժմեան տեղւոյն զնոյն ցուցանէ»[2]։ Այսպիսով ուրեմն ոչ միայն Ուախքը, յատկապէս Գարդմանը, այլև Արցախը Աղուանք է կոչւում և յետագայ դարերում։ Տփխիսի Քարափի Ս. Յակոբ եկեղեցու գրչեայ աւետարանն ունի հետևեալ յիշատակարանը. «Զեռամբ տէր Մանուէլի ի թուին Հայոց ՊՀԷ [1428], ի յաշխարհիս Աղուանից ի վիճակս Ամարասայ, ի գեղս Շուշու կոչեցեալ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ի կաթուղիկոսութեան տէր Յովհաննէսի ... հայրն», որի տակ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանը գրում է հետևեալ ծանօթութիւնը. «Ամարասը և Շուշու գիւղը Արցախ նահանգումն են, և ոչ Աղուանից աշխարհում»[3]։ Հ. Հիւբշմանը այս հանգամանքը՝

Վերջապէս մէջ բերենք և Խորենացու աշխարհագրութեան երկու հրատարակութեանց գաւառների լիակատար ցանկը Աղբանիա – Աղուանքի. «Եխնի, Բեխ, Քամբէճան, Շաքէ, Ոստան-ի Մարծպան, Դաշտ-ի Բալասական (Հին տպ. և նոր օրինակք յաւելուն աստէն զայսոսիկ անուանս բնիկ գաւառացն Աղուանից. Հողմաղ, Քաղայ, Շաքէղ, Լեռք, Համբասի) և այլ գաւառս զորս ի Հայոց հանեալ է,